

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/6

20 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի դիմումը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի դիմումում բերված փաստարկները.

Ա/Ձ Մուշեղ Մանուկյանը հայտնում է, որ 2014թ. 4-րդ եռամսյակում աշխատակցի կողմից սխալմամբ ՀԴՄ է մուտքագրվել 174.266.540 դրամ: Այդ մասին տեղեկացվել է տարածքային հարկային տեսչությանը, սակայն կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է նշված վրիպումը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման շրջանառություն երբևէ չի ունեցել, Ա/Ձ Մուշեղ Մանուկյանը խնդրում է վերոգրյալ գումարը համարել անվավեր և չընդգրկել իրացման շրջանառության կազմում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Մուշեղ Մանուկյանը 26.11.2014թ. սխալմամբ հսկիչ-դրամարկղային մեքենա է մուտքագրել 171.968.804 դրամ, սակայն տեղի ունեցածի մասին նա տեղեկացել է միայն 28.10.2016թ.՝ ՀԴՄ-ն գրանցումից հանելու ժամանակ: Արդյունքում, Ա/Ձ Մուշեղ Մանուկյանը չի կարողացել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով և ժամկետում լուծել առաջացած խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

...

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգը, քանի որ սխալմամբ մուտքագրված գումարի գրանցման մասին տեղեկացել է միայն եռամսյակային հաշվետվությունը կազմելու ժամանակ:

Միևնույն ժամանակ, Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի կողմից 171.968.804 դրամ գումարը ՀԴՄ սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում են հետևյալ հանգամանքները: Մասնավորապես, 2014թ. իրացման շրջանառությունը կազմել է 8.630.764 դրամ, 2015թ.՝ 8.625.000 դրամ, իսկ 2016թ.՝ (մինչև 28.10.2016թ.) 5.380.000 դրամ: Հարկ է նշել նաև, որ 28.10.2016թ.-ից Ա/Ձ Մուշեղ Մանուկյանը դադարեցրել է գործունեությունը (լուծարվել է):

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի կողմից 171.968.804 դրամը ՀԴՄ է մուտքագրվել թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարի մասին ուշ տեղեկանալը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով այդ մասին արձագանքելու ժամկետի բաց թողնվելը, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ գումարը Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Մուշեղ Մանուկյանի դիմումը՝ սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ